

ԵՆԻՔԱՆԻ



1

(184)
Հունվար, 2022



ՈՒՉՄԻԿ ԴՎՎՈՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔՆ ԻՐ ԶԱՐԿԵՐԱԿՈՎ ԿՐՈՂՈՐ

Երկրի նժարն էլի դատարկվեց, երկնքինն ավելացավ... Հայրենիքն իր գարկերակով այս կրողն էլ չդիմացավ (հանկարծ նկատեցի, որ նախադասությունների վերջին բառերն ավարտվել են նույն վանկով՝ ցավ): Մենք, այս հերթական մեծ ցավը, մեծ կորուստը շալակած, դեռ երկար պիտի հերթապահենք հայ գրականության դատարկվող միջանցքներում...

Տխուր ստացվեց: Տխուր, որքան մեծ պոետի կորուս-

տը... Տխուր, որքան նրա վերջին ճանապարհի՝ նրան ոչ վայել անշուք հրաժեշտը:

Բայց ճշմարիտ բանաստեղծը չունի վերջին ճանապարհ. նրա յուրաքանչյուր բանաստեղծություն իր ճանապարհն է (ոմանք ուզենան, թե չուզենան), Ռազմիկ Դավոյան երևույթի դեպքում նաև մեր ճանապարհն է:

... Մենք անփույթ ենք: Մեզ թվում է՝ մեծերը միշտ մեր կողքին են լինելու: Մենք սովորույթի ուժով մխտում ենք նրանց ներ-

կայությունը: Ռազմիկ Դավոյանի ներկայությունն էլ կարողացանք մխտել, իսկ մեզ որքան էր անհրաժեշտ նրա խոսքն այսօր, որքան է անհրաժեշտ վաղը:

Վաղը... այսօր... երեկ...

Երեկ մեզ թվում էր պոետի հավերժ է, ու հանկարծ ժամանակն ամլացավ մեր աչքերի առաջ...

Բայց միևնույնն է, պոետի հավերժ է՝ վկայությունը՝ դավոյանական բանաստեղծությունը:

Վաղը... այսօր... Այսօր, երբ արժող-չարժող-

ները քար են շարտում ճշմարիտ արժեքների վրա, վերջիններս խռովում, հեռանում են մեզանից կամ պարզապես խլածաղկի նման փշրվում են օդում...

Բայց գալու է անշուշտ փշուրները հավաքելու ժամանակը, վերստին գալու է Ռազմիկ Դավոյան բանաստեղծի ժամանակը, գալու է բանաստեղծության ժամանակը...

Իսկ դա արդեն վաղը: Անդրանիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՍԻԼՔՆԵՐ

Արորով ինձ հողից հանեցին, Ինձ հողում ինչո՞վ են թաղելու... Հոգնել է իմ կյանքի մոտյգ-ծին՝ Չի՛ թոչում, չի՛ գնում, չի՛ թոչում Հողմերից երազներ քամելու: Չի՛ տեսնում ոչ ոքի, ոչ մի բան էվ, ափսո՛ս, ոչ մեկին չի կանչում.-

Կյանքը լուռ մեռնում է հավիտյան, էվ նրա շիրիմին ոսկեցուլ, Ոսկեցուլ տեսիլքն է կանաչում: Ես վայրի աստղերով զարդարված՝ ճշում են խոսքերով խաթարված, Որ կյանքը կորչում է անհետ, Տեսիլքներն ապրում են հավետ, Տեսիլքներն ապրում են վտարված:

Տեսիլքներ ծաղկում են ամենուր Ձեռքերում մի անհայտ տրտմության,- էվ քիչ-քիչ մեռնում է կյանքն, ավաղ, Մաս առ մաս տրվում է հողմերին, Տեսիլքներն ապրում են հավիտյան:

Ապրում են սերունդներ աշխարհում, Գալիս են, գնում են ու չկան, էվ մեկի համար, որ չգիտենք, Տեսիլք ու ցնորք են հավիտյան: Մենք մեկի համար, որ չգիտենք, Տեսիլք ու ցնորք ենք անմեկին, Գալիս ենք, անցնում ենք ու չկանք, Չուվվում ենք հողին ու երկնքին: Երկինքը տեսիլք է մի անժիր, էվ հողը տեսիլք է կորստի, Աստղերը երգում են անձանձիր, Որ մեկն իր կարոտը չըսերի:

Երեկ տխուր, այսօր ուրախ, Ալիքի պես ծափ են տալիս, Երեկ՝ դեպի անհայտություն, Այսօր դեպի ափ են գալիս:

Լուռ ժպտում են փոքր ու մեծին Կամ ծիծաղում խենթի նման, Ինձ բաշխում են ավազների՝ Անապատի գետի նման:

Ինձ բաշխում են անմնացորդ, Ինձ ժպտներն ո՞ւր են տանում, Ծիծաղիս մեջ ամեն անցորդ Հոգնած հոգին է լվանում:

Վաղը երբ որ մշուշ լինի, էվ արցունքներ ծնվեն ցավից, Գուցե մեկը փոքրիկ մի կայծ էտ բերի ինձ իմ ծիծաղից:

ԶՎԱՐԹՆՈՑ

Ինչպես բոլոր լավերն այս աշխարհում, Քեզ էլ տառապանքով ստեղծեցին, Հետո լցրին խունկով, բույրով արեարյուն, Հետո լցրին արեգնածին: Հետո ավերեցին չստեղծողներ օտար:

Միշտ էլ կատակում է փիլիսոփա կյանքը... Ուրիշների համար՝ դու պատմության վթար, Իսկ ինձ համար... մնաց միայն տառապանքը:

Ծառը ծառ էր ծնվել, Ապրում էր ծառ, Լիքն էր ամառներով, աշուններով, սիրով. Դատարկ անկյունները լցված էին Կապույտ սովերներով ու երկնքով անծայր:

Բողբոջել էր ծառը, Ուռել-բողբոջել էր, Որ՝ ուր որ է ահա պիտի ճաք տա, Պայթի Ու դառնա երգ, Քամին եկավ հանկարծ, Քշեց երկինքները ծառի անկյուններից, Հետո բողբոջները շոյեց մեկ-մեկ, Հետո փսփսուքով համոզում էր ծառին,

Թե՛ դու ծառ ես ծնվել, Խուլ ու համըր մի ծառ, Թե՛ իզուր է, լավ չէ, Մի՛ դառնա երգ: Ու ձեռքերը հենած խավարի թաց կողին,

Ծառը մի խուլ ճչաց, էվ առաջին հերթին Դարձավ անհուն մի երգ՝ Հենց իր՝ քամու շրթին:

Դեղին տերեւներն հավաքել քամին, Խորանն է լցրել տաճարի, Հետո սուլում է մեծավորի պես, Մեծավորի պես ինքն իրեն ասում, Թե՛ հիմա կրա՛կ, կրա՛կ կճարի, Կրակ կվառի ու կտաքանա... Արեւն իջել է եւ կիսակործան խորանի խորքում Այն հին, հեթանոս հուրն է բորբոքում:

Կանգնած չեն տանիքները-Նրանք նստած են պատերի վրա: Կանգնած չեն պատերը-Նրանք նստած են հողի վրա: էվ հողը նստած է մեռածների մարմինների վրա:

Պատերը պտտվում են շուրջս: Չարմաքած երգերը մեխվել են սյունների նման: Թախիծը երկինք է դարձել, Ապրելու երգեր է հանկերգում:

Փշրեցեք ձեր ներսում եղած պատերը, էվ ազատ, էվ ավեր մի աշխարհ կունենաք ձեր հոգում:

Քամիները բոլոր, քամիները բոլոր, Ինձ թվում է թաքուն Ամեն տարի մի օր, Սուր-սուրալով, կամ թե Փափուկ թավալզուր, Հավաքվում են մի տեղ Քամիները բոլոր: Ե՛վ աշխարհի վրա, Ե՛ւ աշխարհի վրա Քարանում է հանկարծ Հողը հազարամյա, Ու քարերը քարե Շնիկներ են դառնում,

Տիեզերքում մի մեծ Լուռություն է հառնում, Ասես հողը մեկից Երկինք է համբառնում:

Ուռուցիկ են դառնում էվ ծովերը բոլոր, Օվկիանոսներն ամեն, Որ խորքերից իրենց անհուն տազնապների Մի ծայն, մի շշմոջում, Մի հառաչանք քամեն: էվ ուռուցիկ, կապույտ ջրերն իրենց վրա Բարձրացնում են ճերմակ Առագաստներ անթիվ, Որոնք քամով լցված, Ուռուցն են անընդհատ Ու լուռ քարանում են Չսուրալու խանդից: էվ ուռուցիկ, թավշե շրթունքների վրա Բառն ուռչում է՝ որպես Բողբոջն ամենամեծ, էվ չի հիշում ոչ ոք, Ոչ մեկը չի հիշում, Թե՛ ո՞վ իրենց այդպես Համրությանը գամեց:

էվ լարումի ցավից Կտրատվելով անլուր, Հանկարծ տիեզերքում Բանաստեղծն է ճշում, էվ սուրում են ծովում Առագաստներ անթիվ, էվ պոկվում են շուրթից Հնչյունները կաչում, էվ լսվում է՝ ինչպես Հողի ամեն հյուլե Արձագանք է հնչում:

Նա ճշում է այդպես էվ ինքն արդեն չկա, Նա ցրվում է կյանքի Աչքերի մեջ ազահ, էվ նա չի էլ լինի, Չի հայտնվի, մի՛նչեւ Այդ մեծ, սարսափելի Լուռությունը չգա:

Ամպերն իջել ահա ճերմակ կտուցներով Նոր արթնացող հողի բույրերն են հոտոտում, Փափուկ ծիծաղի պես

ալի՛ք-ալի՛ք-ալի՛ք, Օրորվում են դանդաղ Թարթառ գետի հովտում:

Ու դաշտն անիրական երազներ է ծնում, Թե՛ ուր որ է ահա քեզ կգրկի ծածուկ, Կփաթաթի մաքուր մշուշների քողով, Բաց կարծակի բոլոր կարոտները անձուկ:

Նա կբացի ահա քո մարմինը փակված, էվ դուրս կգան բոլոր տազնապները թաքուն, էվ մեծավոր մի ծառ, թեկուզ եւ գլխատված, Կտեսնես, թե ինչպես, միայն հենց քեզ համար, Իր նոր, անկտրելի ճյուղն է ճառագայթում: էվ խաբկանքը ահա հալիլում է կամաց, Մշուշն ինքը իրեն դաշտի ծայրն է հրում, Թրթռում է դաշտը մերկ աղջկա նման

էվ լուռ գալարվում է կանաչ սարսուռներում: էվ թվում է ահա արդեն քանի տարի Դու ընկած ես այդտեղ, հենց այդ դաշտի եզրին Որպես անպետք արոր, կամ որպես հին գութան, էվ քո աչքի առջեւ Արեգակը դանդաղ բացումն է կատարում Իշխանական դիրքով մեծավոր մերկ ծառի էվ նրա մե՛ծ, անհո՛ւն, անծա՛յր ողբերգության:

Մեր հոգիներն անլույս ու կույր լապտերներ են, ճոճվում են Առաստաղից ներքեւ դատարկության, Չգտնումի վայելքն օրորվելով: - Պատերի մեջ թաղված, Թախծից ժանգոտվում են Լույսի կոճակները:

Լուսինե Աղաջանյան



Մենք կին ենք եղել

Սիրելի՛ ընթերցող, այս գրքի պատումների հերոսուհիներին հատուկ է մարտի 2-ի խենթ ոգին, թեև նրանցից յուրաքանչյուրը փորձել է թաքնվել ծննդյան մեկ այլ ամսաթվի տակ: Սա գիրք է կանացի բնության ու զարթոնքի, իզական սկզբի ու կանանց կողմնակցության մասին, երազային ապագայի ու մի ներկայի մասին, որի խորհուրդը ոչ մի տրամաբանությամբ չես բացատրի, բան պատկերացումով՝ մենք կին ենք եղել...

Ներկայացնում են գրքից մի փոքր հատված:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԼԻԼԻԹԻ

Այսօր, երբ աշխարհում պատերազմ է, և արկեր են պայթում ոմանց գլուխներում, ես ուզում եմ խոսել խաղաղության մասին: Ես

կին եմ, ով գլխի է ընկել, որ պատերազմը ևս դաստիարակության կարիք ունի, ու դա պետք է սկսել նրա անունից... Երբ փոխենք նրա անունն ու փաղաքշաբար Պատո կոչենք, նա կթողնի դիրքերն ու տուն կվազի, ականջներում կարթնանա մանկության օրերի՝ իր մոր կանչը, որ պատուհանից նայում էր դրսում խաղացող հասակակից պատանեղանքին ու իր տղային ծանոթ ծայրով կանչում: «Պատո՛, բալեն՛, տուն արի, հաց կուտես, էլի կգնաս»: Ամեն պատո շուռ էր գալիս իր մոր ծայրից, ու թերևս դրանում էր նրանց համերաշխությունը: Բոլորի մայրերը մեղմ էին ու հանդուրժող կերակրում էին զավակներին ու էլի բաց թողնում դեպի բակ, որ ելնեն ու խաղը շարունակեն, բայց զավակներին այդ խաղերը մեծացրին, այնքան մեծացրին, մինչև որ նրանք տիրացան իրենց ամբողջական անվանը, որի մեջ ոչ մի գուրգուրանք չմնաց:

Պատերազմը վաղուց մորից որբացել է, ու ես, կին լինելով, որոշել եմ նրան տուն կանչել մոր ծայրով: Ասելու եմ.

«Պատո՛ ջան, տուն արի, ես քո սիրած ապուրն եմ պատրաստել, առանց քեզ չեմ ուտելու: Ինչպե՛ս կարող է նա առանց արծազանքի թողնել ինձ նման հմայիչ կնոջ կանչն ու տուն չվազել:

Նա կվազի տուն ու ամբողջ ճանապարհին ինքն իրեն կմեղադրի, թե ինչո՞ւ ինձ կարոտեց, թուլացավ, հետո իրեն կհանդիմանի, թե ես ինչ բուկ եմ, մի աման տաք ապուրի համար ծնկներս

ծալվեցի՞մ, որ հետ վազեցի: Ու չի իմանա, որ ես իր զորության արքայուհի ջուրը խմել եմ, իմաստնացել, հասկացել, որ իրեն պետք է գայթակղել իր մոր ծայրով:

Չենց ներս մտնի, կբացեմ փոշոտ ալբոմն ու կասեմ.

«Չիշո՞ւմ ես, Պատո՛, հայրդ երբեք կենակցել ու մերձենալ չէր ասում, ասում էր՝ ապրել... Քեզ էլ ասում էր՝ տղա՛ս, երբ մեծանաս ու որևէ կնոջ հետ ապրես, տեր կլինես նրան: Ո՞նց էր կարմրում հայրդ էդ «ապրել» բառից, գիտեր, որ նկատի ունի սեր անելը: Չիմա ես եմ կինդ, Պատո՛, ես, որի հետ պսակվեցիր ու էլ տուն չեկար, որովհետև առաջին գիշերը ես քեզ տղամարդ դարձրի, դու քո լրիվ անունն առար ու գնացիր... Չիմա եկել ես, պաշտպանիր ինձ հետ ապրելու իմ իրավունքը, ծոցդ բաց արա ու ներս առ ինձ, որ քո հոր ասած կյանքով ինձ ապրեցնես: Տե՛ս, թե ներսումդ մեր սրտերի ռիթմը ինչքա՞ն համաչափ է: Կյանքը հենց այդտեղ է, Պատո՛. արի ես մի գիշերվա մեջ այնպես ապրեցի մեր բաժին կյանքի սկիզբն ու վերջը, որ առավոտյան պատուհանից այն կողմ մեր աչքերի դիմաց ոչինչ չէր երևա, ծաղկող ծառերից բացի: Տո՛ւր ինձ քո հոր պատգամած ապրելը. կարմրելն այս մթության մեջ մեզ միայն ամոթխած թացություն կթվա, ու այն չի զգա ոչ ոք, երկուսիցս բացի: Եվ, առհասարակ, ի՞նչ է կյանքը, եթե ոչ երկուսի ապրելը հիմա՛՛ ու մեկտեղ: Արի այսօր ապրեցիք մեր չապրած բոլոր հեքերն ու շոյենք

կյանքը՝ ինչը հենց այսօր կարող է մեզ տեսանելի ու մոտ լինել...

Նրա բերանը կչորանա, ու ջուր կուզի, բայց ես նրան կաթ կտամ, որ մրափի: Չետո տաք ջրով կվաճանա ոտքերն ու հատիկ-հատիկ կմերսեմ մատները ծայրահեղ քնքշությամբ, որ աչքն էլ չթարթած խելքը գլխից առնեն: Չի էլ զգա՝ ոնց գենքը կիջեցնեն ուսից ու կոնեն խորդանոցում: Նա հանկարծ կզգա, որ մատած տեղը քնում է. ես անշուշտ նրան կուղեկցեմ դեպի ճեղքակ անկողին, ու ինքս էլ կհանեմ շորերը, որ համբուրեմ թևերն ու ոտքերը, որոնցից փչող վառոդի հոտն արդեն այնքան մեղմացած կթվա, որ ինձ կհիշեցնի էն հարդի բուրբ, որի մեջ միակ անգամ սեր ենք արել... իսկ ես ջահել եմ եղել ու չեմ իմացել, որ իր հայրը սեր անելուն ապրել է ասել...

Ես նրան կողքիս ու տանը պահելու համար ամեն հունար կթափեմ, կասեմ.

«Պատո՛, մեռնեմ պատկերիդ, իմ խարտյաչ պատանեկիկ, իմ սիրո պատառ, իմ պատսպարան ու ամրոց, իմ պատվամեծար, տանս պատրույզը վառ պահիր, ես քեզ կարոտել եմ, քեզ եմ ուզում ու քեզանից իմ տղային եմ ուզում, էն տղային, որ խոստացել ու խնայել ես, ասել, թե դեռ օրը չէ: Ահա օրը եկավ, վերմակիդ տակ եմ, ասա՛ ի՞նչ գույն եմ ունենալու մեր զավակի աչքերը:

Նա իմ խելագար քնքշությունից սկզբում կմոլեզվի ու ինձ կշփոթի թշնամու հետ, բայց հենց համբուրեմ նրա կաթնա-

հոտ շրթունքները, չի դիմանա ու գլխից վայր կդնի աշխարհի բոլոր գենքերը, որոնք ես կպահեմ. թող մեր զավակը դրանք խոփեր դարձնի ու բակի հողը պարարտացնի: Իմ Պատոն չի էլ իմանա, թե ինչպես լուսադեմին ականջիս կասի.

«Արի մեր որդուն խաղաղություն կոչենք...

Ես հաղթանակած կարթնանամ՝ իմանալով, որ երկուսըս անցավ է լինելու, որ տղաս ինձանից դուրս է լողալու ամպերի երանավետ փափկությամբ, որոնց վստահությունը մի պարզ ճշմարտության մեջ է՝ ինչքան էլ լողան, երկինքը երբեք չի ավարտվելու:

Թող Պատոն քնի, ես վազեմ, որ հասցնեմ աշխարհում ապրող իմ բոլոր ընկերուհիներին ասել. «Գիրքերի բոլոր կողմերից հետ կանչեք ձեր պատանեղանք», հա, հենց նրանց, ովքեր փոքր ժամանակ խաղացել են նույն բակում ու իրենց ամբողջական անվանը տեր դարձել միայն մեծանալով: Չա՛, թող կանչեն, թող մոր ծայրով հետ կանչեն, թող մի բաժակ տաք կաթ տան, ծայրերին քաղցրություն տան ու կրծքի բուրբով փակեն ապագայի հիշողության նրանց տեսողաշուք, անվանը փաղաքշանք տան ու զավակներ ծնեն: Իմ որդին աշխարհով մեկ սփռված քույր-եղբայրներ է ուզում: Մենք՝ կանայքս, պիտի ծնենք նրանց և ուղարկենք իրար հետ խաղ անելու...

Լուսինե ԱՂԱՋԱՆՅԱՆ



Ռոբերտ ԵՍԱՅԱՆ

Պատերազմի հետքը հիմա՛՛ ցավի բռունցք և վերքերում շրջագայող մի կույր ատուպ.- ինչ խոսում ենք՝ մեր չասածը ցա՛վն է ասում, ինչ լռում ենք՝ վերհանվածը անհա՛գ մի սուր:

30.06.2021թ., ք. Գյումրի

Բառի աշխարհը մի առաքյալ է, անսպառ աղբյուր, մեծության հունից շարժվում է դեպի սեր-ամենուրեք, կրում և՛ հարված, և՛ տանջանք, և՛ բեռ, բայց մի սեզ համբույր ամբողջն հատուցում և ընծայում է աստվածային բերք:

12.08.2021թ., ք. Գյումրի

Մինչ քո վարսերը՝ գիշերներ բախտի, հոսում են լույսի լապտերի միջով՝ շնչավորելով խորանն իմ ցավի, աղոթք է սերը, որն հավաքում եմ շուրթերով ուսից, ձեռքից, ստինքից՝ լույս հաղորդելով քանդակվող կավին...

08.08.2021թ., ք. Գյումրի

Տողի սենյակից մտնում եմ հիմա այլ տողի սրահ. դրված են պատերն իմ և իմ միջև, ոչ թե՛ տողերի, ոգու բեռնից ինձ հանող ծայն է ճանապարհը այս, ուր արծիվներն են սլանում՝ կախված այգի շողերից...

08.08.2021թ., ք. Գյումրի

Ապաշխարության հրեղեն քարից արյան կաթիլն է բուսնում՝ հանց կակաչ, հիշողությունը՝ օղեղեն պարիսպ, մահվան խորհուրդն է նրա տակ պառկած:

Չայոց բարկ ոգին մարտավարում է երկինքներից վեր, Աստոծ լույսի մեջ վերածնվելով տևում է համառ, խրամատները արծվի թևերին բարձրանում են վեր՝ ճամփա հարթելով ժամանակի նոր հարության համար...

15.08.2021թ.

Բառերը խորքից լույս են արձակում և իրենք չկան, ապրում են մեր մեջ՝ հանց աներևույթ մի նոր մոլորակ, և ջերմացնում են մեզ, որպես մի այլ աշխարհի վկա, և կյանք ստանում աստղացուլքերով մեր շուրջ բոլորած:

15.08.2021թ.

Եվ հայրս լույսի կաթիլ է ըմպում, սնվում ավիշով Մեծ հիշողության, երկնքի ճյուղից քաղում է պտուղ՝ ապրելով որպես հոգու ավազան:

17.08.2021թ., ք. Գյումրի

Ի՞նչ տարերք, եթե այն կշռվում է մտարով ոգու, ծնվող բառերին փոխարինում է արարող լույսը, սիրո մի շշուկ հայացքիդ ծովն է արագ փոթորկում, եղած ու չեղած չափանիշներից հոգին միշտ դուրս է:

22.08.2021թ., ք. Գյումրի

Բառերը շուրթից կախվում են, ինչպես խոլ կախաղանից, իսկ նրանցից դուրս կյանքն ուխտավոր է, Տե՛ր, անհնա՛ր է սերն հանգավորել...

Փշե պսակ է հյուսվում աշխարհի զոհասեղանին...

24.08.2021թ., ք. Գյումրի

Իմ աչքերը բանուկ ճանապարհներ են՝ կյանքի-մահի միջև ընդարձակ տեղանք, որտեղ բույն են հյուսում

արագիլները, թռչե՛քով գծելով մի զոհասեղան:

27.08.2021թ., ք. Գյումրի

Այս ապրիլը ծառից բխող լույսի ոստ է. հոգեվարք չէ անհույս զոհի: Եվ ապագան արագիլի թուխս է նստել տաք թևերին հորիզոնի:

31.08.2021թ.

Չորս ձեռքերի հայացքը բխել ճյուղին մասրենու, բուրում է հողի և տարածության վարդահեքերով, որոնցից մեղուն համբույր առ համբույր երբ վեր է ելնում, ցնծում են ճյուղերն հրեշտակների անբառ երգերով...

09.09.2021թ., ք. Գյումրի

Նարեկին

Երբ հիշողության ջութակի լար է տողս արթնացող, բազմաճյուղ հողմ է շնչառությունը թափվող անձրևի, դու հայտնվում ես, տղա՛ս, ասուպի սահուն թռչե՛քով և ազատում ինձ տառապանքների քարե սանձերից:

09.09.2021թ.

Գուցե այս դուռը՝ սկիզբն հորիզոնի, ճանապարհ բացող միայնակ բառն է, դեռ ապրող հոգին, որ չի համբառնել և սրբազան զոհից...

13.09.2021թ.

Տարածության բաց աչքերն են, իրերի դեմքն ու պարզ լեզուն, սովայտանքի խարույկն են ես հավատամքի դռան դիմաց, շնչառության մեջ պատկերի ծաղկող լույսն են՝ մի նոր խզում, որ չառնչվող խենթ բառերին հաղորդում է հոգու իմաստ:

27.09.2021թ., ք. Գյումրի

Թռչունը հոգուս կտավն է տանում երկինքներն ի վեր, ծաղկած ճյուղերով գուրգուրում է ինձ անձրևը գարնան, ամպն ի վար սահող հայացքը միրգ է՝ դիպվածի նվեր, իսկ աչքերը քո՛՝ մանուշակաբույր աղոթքի խորան:

29.09.2021թ.

Չիշողության թարթիչներից ըմպում եմ ես հյուսք լույսի և ուզում եմ աղոթքներս դարի կարմիր շնչին գամել, երբ հայացքում ճանապարհի անձրևում է երկինքն հույսի, և ամեն մի ծնվողի ճիշտ օրորոցվող ապագան է...

06.08.2021թ., ք. Գյումրի

Ասուպի ծայրով գրեցի մի տող. ճերմակ թռչե՛քներ հառնեցին հողից, և ունայնության սահմանը հատող ծաղիկով ծուլվեց հայացքս ցողին:

30.08.2021թ., ք. Գյումրի



Երկինքը այնքա՛ն պարզ է, որ կարող ես հաշվել բոլոր աստղերը, եթե չմտնես...:

Հայկ Տեր-Սկրտչյան

ԿՅՄՆՔ՝ ՄԻ ՄԻՈՏ ԱՅՆ ԿՈՂՄ

Հուշագրության, օրագրության, վավերագրության, ի վերջո՝ ժամանակագրության ինքնօրինակ մի համաձուլված մեր աշխի առջև համեմատելի մերօրյա գրականություն: Ահա վկայությունը՝ քննվող ժողովածուն: Ապրված, զգացած ու զգայուն, ցավոք, և՛ տողերը, և՛ խոհերն ու մտորումները, և՛ պատկերները, խոսքը, լուրջությունն անգամ: Անհավանականության չափ իրական հագեցած վառողի ամպ ու հոտով, պատերազմի աննկարագրելի թանձր զգացողությամբ, երբ «ոչ ոք չգիտի՝ քանի գիշերների ու ցերեկների է արժանանալու»:

Եվ սկզբից մինչև վերջ անտատան լարվածությունը, հետաքրքրությունը չեն լքում, ամուր պահում է թելը պատումի: Կյանքի և մահվան սահմանագիծ, երբ փորձված զինվորն ու անփորձը հար և նույն հոգեբանական զգացողություն ունեն, այլ բան է, թե նրանցից ամեն մեկն ինչպե՛ս է այն արտահայտում, կամ արտա-

հայտո՞ւմ է արդյոք: Վախ՝ ինչպե՞ս սպանել մարդու, վախ՝ մեռության, մահվանը դեմ առ դեմ հանդիպելու, «վայրի» վախ, «սպանվելու վախ՝ թաղված իր մեջ»: «Ունանք վախենում էին նախ թշնամու ուղղությամբ. չէ՞ որ կրակում էին կենդանի մարդկանց վրա», իսկ մյուս կողմից էլ՝ շուտով նաև կկրակեն իրենց վրա, «ոլորված մատներով կքաշի հողը իր մահվան կոկորդում»:

«...Ձիմվորի հոգին վեր թռավ գրահամեքենայի վրայով, բարձրացավ ավերված հենակետի վրայով, դաշտերի վրայով, սարերի վրայով: Ի՞նչ տեսավ նա այնտեղից վերևից...»: Ուշագրավ է, որ ռեժիսորական տաղանը ունեցող հեղինակի հետ գործ ունենք. վայրկյանում հաջողված 24 կադրեր են, խոսում էջեր: Արդյունքում շահել է վավերագրական-գեղարվեստական սեղմ, բայց և մեծուհ, հար և միշտ, արդեն երբեք վախ չունեցող, արդեն իսկ բոլոր ժամանակներին նույն ոգեղենությամբ դիմակայելու պատ-

րաստ ստեղծագործությունը՝ արարված պատերազմում հաղթանակած հայորդու ձեռամբ. ի դեպ, ինչը պակաս կարևոր չէ, արարված որպես նախապտուղ: Սա գրողի մերօրյա հերոսի ապրումների ոգեղեն խտացումն է՝ վիպական վեպին համազոր ծավալ կա: Իսկ էջերը գրվելուց հետո վստահաբար հեղինակին հաջողվել է ցմրոր դատարկել հոգում կուտակված, իր խոսքերով, մածուցիկ հուշերը, որոնք գուցե գրականություն դառնալու ճանապարհին սեղմել են մինչև շնչահեղձություն:

Մյուս կողմից՝ դեպքերի, իրադարձությունների դիտարկումը բազմակողմանի բնույթ է կրում. «Թշնամին գրագետ արեց ամեն ինչ»: հոգեբանական ու ֆիզիկական գրոհ, բայց նաև «գրագետ» հոգեբանական առաջին հերթին: Մեկ այլ կողմից՝ մարդկային մատուցումը, գուցե սկսված, վախի ազդեցության տակ, խղճի խայթ սպանիչ, բարդ ու հակասական հոգեբանական վիճակներ, հանգուցալուծումներ: Ահա նորակոչիկներին ապրումներ են ընդհանուր գծերով ընդամենը մեկ-երկու նախադասությամբ՝ «Փոքրիկ, դողացող տղա, ի՞նչ էս անում այստեղ այս սարերում: Ինչո՞ւ ես պառկել այս երկրի վրա՝ վախից ամուր փակված աչքերով: Ինչո՞ւ տանը չես: Տանը, հավանաբար, հիմա տաք է, հարմարավետ: Տանը կարող ես աթոռ դնել պատուհանի մոտ, ոտքերով բարձրանալ, փափուկ ծածկոցով ծածկված՝ ամեն ինչ դիտել կողքից...»:

Միով բանիվ, թե՛ վիպակը, թե՛ պատմական ժբները լրացրել են մեկ-մեկու՝ բազմաբարդ խճանկարի նման ամբողջական դարձնելով պատկերը:

Գրքի շապիկին բնականաբար ոչ պատակահանորեն նույն պատերազմի՝ այլևս երկնամբարձ հերոսներից մեկի ստեղծագործությունն է: «Երկինքը այնքա՛ն պարզ է, որ կարող ես հաշվել բո-

լոր աստղերը, եթե չմտնես...», գուցե նա է՝ 18-ամյա նկարիչը՝ նորակոչիկներից մեկը՝ աչքը՝ երկնքին աստղերը համրելու, և, ի՞նչ իմանաս, գուցե ապագայում հուզախառն երևակայությամբ թղթին հասցնելու ակնկալիքով, մյո՞ւսը... Մյուսը կրկին երկնքին ճակատագրորեն, անսպասելիորեն և այնքա՛ն սպասելի՝ այնտեղից աշխարհին ու գուցե նաև կողքի աստղերին նայելու:

Ապա պատերազմը խաղաղ բնակչության կյանքում կանայք ու աղջիկներ, մայրեր, որբացած ու որբացող զավակներ: Երբ «բոլորը ցանկանում են, որ ծերանան, զոհեն... մեկ տարի...» ցավալիորեն իրական, իր ամենատրամաբանական շարունակությամբ: Եվ նամակներ սիրո, կարոտի, հավերժ սպասումի: Գրքում կարևոր խտացումներից ևս մեկը՝ մեկ սիրո մանակ, մեկ հանդիպման սպասում, բայց հազարավորների հոգու թրթռ ու կանչ. քանի՞ այդպիսի մանակներ ունեցան նույն վայրտը՝ «դա դեռ անհնար է»: Նամակներ՝ սիրուր բովանդակությամբ՝ ընդհուպ՝ այն գրում է արդեն մահացած ու նույնիսկ հետմահու պարզակ աթճանագած: Այսպիսի պարզ ճշմարտությունները միայն այս մղձավանջին են հատուկ:

Իսկ որտե՞ղ են «մահվան հրեշտակները». սա ամենակին էլ փոքրածավալ ժողովածու չէ, այստեղ պատմական մի ժամանակաշրջան է, որտեղ ծավալվում են մի կողմից՝ պատերազմական գործողությունները, մյուս կողմից՝ մարդկային ներհուն հոգեբանությունն է՝ թե՛ մոր ու զավակի խոհերն ու զգացողությունները, զգացմունքներն ու ապրումները, թե՛ բժշկի ու զինվորի՝ բարձրաստիճան փորձառուից մինչև աղվամազը երեսին նորակոչիկը, ումից դեռ ստնտուկ կաթնաբույրն է ծորում, և մեծ կամ փոքր վտան-

գի դեպքում առաջին բառերը, գուցե Աստուծո անունից էլ առաջ՝ «Մա՛, մա՛մա՛»-ն... Մահվան հրեշտակները նաև քաղաքում են:

Առաջին համբույրը և առաջին բաժանումը, առաջին դեպի երկինք ցրվող մարմնի մասերը... Պատերազմը իր բոլոր սարսափներով, և ոչ արդեն պատմություն դարձած...:

Հանգամանքներ, տրամաբանություն կամ հանգամանքների տրամաբանություն. ռազմադաշտում գտնվող ամեն մեկը վստահաբար ունի իր պարելու տրամաբանությունը, բայց, դժբախտաբար, ճակատագրի և իր ցանկությունները երբեմն չեն համընկնում, իսկ պատերազմում առավել հաճախ. «...Նման էր ձկան աչքին՝ այլանդակված մի կարթով, որն անսպասելիորեն պատռեց այն կյանքի ուրվական ջրից մինչև մահվան ափ, ինչը նա ունի իր տրամաբանությունը...»: Գրողի մեկ այլ ստեղծագործություն ակնհայտորեն բացահայտում է պատերազմի չգրված օրենքներից մեկը՝ պարզ ու անհրաժեշտ, ինչպես... մահը. «...Եթե ապրեցիք, ուրեմն ինչ-որ մեկը մահացավ ձեզ համար»:

Եվ ինչպե՞ս կոչել գիրքն ամփոփող... ինքնասպանությունը՝ «Այլևս չեմ անի» վերջին գրությամբ՝ «խորհրդավոր արդարացում»/ գուցե անհմաստ, գուցե մանկական, գուցե և խորհրդավոր արդարացում իբրև: Ի՞նչ է սա՞՝ պայթյալի հերոս զինվորի կամ խազագացողն, երևակայության արգասի՞ք, թե՛...:

Ուշագրավ է գրքի պատկերաչին համակարգը, բազմահմուտ և տեղին մակդիրների գործածությունը: Գրքում այդպիսիք մեծ թիվ են կազմում՝ նպաստելով արարումի մեծարժեքությանը:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան.գիտ.թեկն., դոցենտ

ԹԵԹԵՎԱՅԱՄ չՈԳԻ

Այրի կինը շուկայում էր, երբ սկսվեց ռմբակոծումը: Շտապեց տուն, որտեղ մնացել էին իր երկու երեխաները: Այդ պահին ռումբը հարվածեց հացաբուլկեղենի կրպակին: Քարի ու փայտի կտորները թռչում էին տարբեր ուղղություներով, ինչ-որ մեկը վախից սկսեց բղավել: Կինը լաց եղավ, այդ ժամանակ ինչ-որ բան ցավալիորեն խայթեց նրան աջ կրծքի տակ: Կծուը ցավու էր, սպիտակ վերնաշապիկն անմիջապես սկսեց կարմրել, տաք ծորակը հոսեց որովայնի վրա: Նա կոճակը բացեց բլուզի և արյունոտ կրծկալից ներքև տեսավ մի փոքրիկ վերք, որից էլ արյունը հոսում էր: Հասկացավ՝ վիրավորվել է, և հարկ է տուն հասնել: Պայուսակում ամսական մթերքներ ու փող ուներ: Հիվանդանոցում այն կարող էր կորչել, բայց երեխաները դեռ ստիպված էին մեկ ամիս ապրել: Գնացարհին ցավն ուժեղացավ: Ինքն իրեն միփթարեց այն մտքով, որ վերքը փոքր է, վերքը չի կարող լուրջ լինել. փոքրիկ բեկորը չի կարող մեծ վնաս հասցնել:

Տանը կանգ առավ շունչ քաշելու: Միանգամից ի վիճակի չէր շարունակելու... գլուխը պտտվում էր, ոտքերը չէին ենթարկվում, կրծքի աջ կողմում այրոց էր անտանելի: Կինը մտտեց խոհանոցի աթոռին: Երեխաները սարսափահար նայեցին նրան: Վերցրեց սրբիչը և դրեց իր վերնաշապիկի մեջ: Սրբիչը թրջվեց: «Տղա՛ս,» նրա ձայնը թույլ էր, զանգահարեք հարևանուհուն:

Բարեբախտաբար, հարևանը

տանն էր:

Ինչպե՞ս կարողացար: Դու պետք է գնաս հիվանդանոց: Այրին ինքը դա հասկացավ: Ուղղվելով ձեռքով նշան արեց: Հարևանը գլխով արեց՝ կարեկցանքով նայելով ընկերուհուն: Ցավն ավելի ու ավելի էր սրվում: Եվ երբ հանկարծ թվաց՝ անտանելի է դառնում գոռալու աստիճանի, ցավն անհետացավ, և մարմինը դարձավ անսովոր թեթև: Կինը երանելի ժպտաց, ապա հարևանուհուն խնդրեց.

«Մի՛նչ հիվանդանոցում կլինեն, խնամի՛ր երեխաներիս: Դեռ չէր կասկանում, որ մահանում է, որ կյանքը լքում է իրեն: Գոհունակություն զգաց, որ տուն է եկել, փող ու հաց է բերել. նշանակում է՝ երեխաները սոված չեն մնա:

Հարևանուհին, կծելով շրթունքը, արցունքոտ աչքերով նայեց նրան: Հասկացավ, որ մահանում է: Առանց հայացք գցելու նրան չարածնի երեխաներին հրեց միջանցք:

«Խոստանում եմ,» ասաց նա՝ կուլ տալով արցունքները:

Վիրավոր կինը մեղմ հառաչեց: Հարևանուհին սևեռում նայում էր հոգնած դեմքին. աչքերի տակ մուգ շրջանակներ էին: Ավելի հետո այն դանդաղորեն գունատ, բնական տեսք ստացավ:

Նա ծածկեց կնոջ դեմքը սպիտակ շղարշով, որով նախկինում ծածկում էր սեղանի ափսեները, սրբեց աչքերը և... համրացավ:

«Ես կարդացի քո նամակը և հաջորդ րոպեին իսկ սկսեցի մտածել՝ հիմա ինչպե՞ս ես դու: Ի վերջո, նամակներն այնքա՛ն երկար են սպասեցնում: Այս ընթացքում ամեն ինչ կարող է պատահել... Սա է տրամաբանությունը: Բայց ընդհանուր առմամբ գիտեմ ձեզ ոչինչ չի պատահել, ես համոզված եմ, հավատում եմ: Տոները այստեղ մենք չենք նշում: Այստեղ հրաշալի տղաներ են զոհվում: Ես չեմ հասցնում հիշել բոլորի դեմքերը, երբ նրանք հեռանում են: Սարսափելի է: Եվ ես չեմ կարող սովորել թաղել նրանց: Ամեն անգամ երդվում եմ, որ նրանց գերեզմանները խոտերով չեն ծանրաբեռնվելու, որ մենք մեր երեխաներին կանվանենք նրանց անուններով: Սիրելիս, ավելի հաճախ գրիր մորդ: Նա ինձ ասաց, որ ամբողջ կյանքում ինքն իրեն խորապես մեռակ է զգացել: Միայն երեխաներն էին իր ուրախությունը, բայց երեխաները գոհնե մեկ անգամ հարցրի՞մ նրան սովա՞ծ է, չի՞ մրսում:

Ես առողջ եմ, ապրում եմ քո նամակներով ու սիրով: Դե՛ ինչ, հույսը խառնված է երազների հետ: Ժամանակ առ ժամանակ դա տխուր է դառնում: Այնքան հիանալի նկարներ են երազում, երբ մտածում եմ մեր հանդիպման, մեր, ոչ թե իմ կյանքի մասին: Հնարավոր է պատմել, նկարագրել: Չեմ ուզում փորձել: Այս բոլոր երազանքները կտայի, միայն թե հանդիպման մեկ րոպե ունենայի քեզ հետ: Ե՞րբ: Ոչ ոք չգիտի. գուցե շուտով, գուցե ևս

վեց ամիս: Ասում են բաժանումը կմեծացնի հանդիպման բերկրանքը: Իմ կարծիքով, բավական է: Ի՞նչ ես կարծում:

Ես պարզապես երազում էի և պատկերացնում, թե ինչպես ենք մենք քայլում մեր քաղաքով, նրա անաղմուկ փողոցներով: Ես այնքա՛ն եմ ուզում տեսնել քեզ, որ նույնիսկ չգիտեմ ինչի հետ համեմատել այս այրվող, կրքոտ, երբեմն ցավոտ ցանկությունը: Հայտնի է միայն, որ դա դեռ անհնար է»:

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԱՐԴԱՐԱՅՈՒՄ

Նրան սպանված են գտել իր աշխատասենյակում: Ատրճանակը ձեռքին պառկած էր կանաչ գորգի վրա:


Իր իսկ ցանկությունների և ճաշակի համաձայն կահավորված աշխատասենյակը մուգ կանաչ երանգներով էր: Նիտ կանաչ վարզույրը ծածկում էր հսկայական պատուհանները, գորգը խլացնում էր ոտնաձայները: Պատերը շարված էին ընդարձակ ակվարիումներով, որոնցում ձուկ չկար, միայն ջրիմուռներ ու մարջաններ կային, նաև ծովանկարներ շրջանակների մեջ: Ընդհանրապես վերևում մերկ ծովն ու երկինքն էին. ոչ նավեր, ոչ ծովային մարտեր, ոչ առասպելական տեսարաններ, ոչ էլ ձկնորսներ... Ընկ ծովն է տարբեր եղանակներով, տարբեր լուսավորությամբ:

Դա հաճելի էր նրան, ով այժմ պառկած էր այստեղ:

Գրություն գտան սեղանին: Մի կտոր թղթի վրա բառերը գրված էին համարձակ. «Այլևս չեմ անի»:


Այս ինքնասպանության նոտայի որոշ մանկամիտ, աղաչող և պարզ հնչերանգը զարմանալի էր: Ասե ինչ-որ դատապարտելի փոքրիկ բան է արել, և այժմ պատժի առջև փորձում է մանկական եղանակով՝ խոստովանությամբ, այլևս չանել դա: Բայց կոնկրետ ի՞նչ չանել: Նկատի ուներ իր արած վատ գործե՞րը: Միգուցե հենց այս գործողությունների համար մեղքի զգացողությունն էր, որ նրան որդեց ինքնասպանության: Եվ նա խոստանում է հետագայում մահ բան չանել: Կամ ինքնասպանությունն այդ հանցավոր կատակն է, որի համար նա ներում է խնդրում մահ մահկանիտ ու անօգնական ձևով՝ ես այլևս ատրճանակով չեմ խաղալու... Կամ վերջապես նա պարզապես ասում է, որ ինքը եղել է, բայց այլևս չի լինի: «Ես այլևս այստեղ չեմ լինի»: Երևի այս կերպ պետք է հասկանալ այս հաղորդագրությունը. «Իմ ես»-ը այլևս չի լինի...»: Կամ «Ես այլևս չեմ լինի...»:

Ասե ինչ-որ մեկը կարող է վախենալ, որ նա կվերադառնա, որ նա դեռ «կլինի», ուստի քաղաքավարի հավաստիացնում է բոլորին, որ դրանից վախենալ չարժե: Ամեն դեպքում այս անձը շահեց կամ պարտվեց իր դեմ սկսված պատերազմում: Այս պատերազմն այլևս չի լինի: Այստեղ՝ կանաչ ակվարիումներով սեղանակում, մի քանի ժամ առաջ ստորագրվեց տարածքների հանձնումը, և հաստատվեց հաշտություն: Եվ նա խոստանում է հետագայում մահ բան չանել...




Նոր գրքեր

Պատրաստեց Ն.Նիկողոսյանը



ԱՐԻՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

«Մարդու կյանքը քաղցր ու զունեղ է այնքան ժամանակ, քանի դեռ չի դարձել անհամ ու գորշ: Այստեղ գորշությունն այնքան շատ էր, որ իր հետ սրբեց բոլոր գույները: Բացվում հայերը մեռան աշխարհի բոլոր հնարավոր մահերով և ապրեցին կյանքի հնարավոր դժվարություններով: Անկախ ամեն ինչից մարդու մեջ կարոտով ապրում է վերադարձի հույսը: Ամեն ոք կյանքում վերադարձի գոնե մեկ հնարավորություն ունի, կախված նրանից՝ երբ և ինչպես այն կօգտագործի»:



ՄՈՆՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ-ՍՏՐԱԼԵՑԿԻՆԵՆ

«Վան Արյան» իրատարակչությունը լույս է ընծայել Լիտվիայի Կաուուաս քաղաքում ապրող և ստեղծագործող մեր հայրենակցուհի, ԴԳՄ անդամ, բանաստեղծ-արձակագիր Սոնյա Խաչատրյան-Ստրալեցկիենի 18-րդ ժողովածուն «Վիրավոր աղավնի» խորագրով: Գրքում տեղ են գտել հեղինակի թե՛ չափածո ստեղծագործությունները, թե՛ արձակ գործերը՝ պատմվածքներն ու հուշագրությունը:



Հրատարակվել է «Շիրակ» գրական-գեղարվեստական, կրթամշակութային, հասարակական հանդեսի 2022թ. ամսագրի համարը /գլխավոր խմբագիր՝ Սամվել Մարգարյան/: Հանդեսը լուսաբանում է Շիրակ աշխարհի կրթամշակութային, հասարակական կյանքը, որն ընթերցողների կողմից արժանացել է ջերմ ընդունելության: Հանդեսը վաճառվում է Գյումրու, Երևանի, Վանաձորի, հանրապետության այլ քաղաքների մամուլի կրպակներում:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՄՊՈՐՅԱՆՆ ՈՐ ՆԿԱՐՉԱԿԱՆ ԳՊՐՈՑԸ

Լեննականցուն բնորոշ հումորով, ընկերասեր փափուկ ու մեղմ բնավորությամբ... այսպիսի հատկանիշներով են բնորոշում ընկերներն ու աշակերտները Հովհաննես Գասպարյանին Շիպոյին: «Շիպո» է կոչել իր ուսուցչուհին՝ նրա փոքրամարմին, կարճահասակ լինելու պատճառով, հետագայում այս բնորոշումը տարածվել է ընկերների շրջանում և նրան հենց այդպես էլ դիմում էին Շիպո: Գյումրիում մականուններ ունենալը, ինչ խոսք, շատ տարածված է: Գասպարյանն ինքն էլ սիրում էր մականուններ տալ մարդկանց՝ իրենց էությունից, բնավորությունից բխող: Նկարչական ձևերը Հովհաննեսը ժառանգել է հորից: Ավելի հետո Հովհաննեսի շնորհիվ անցել է դասերը՝ Ռոզային: Գասպարյանը սովորել է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտում: Ուսանողական տարիներից եղել է շատ կատակասեր: «Պապիկս գնացել է ինստիտուտ՝ նրան տեսնելու, կուրսեցիներին հարցրել է Գասպարյան Հովհաննեսին գուզեմ, տղեքն ասել են՝ հլը նա-»

յնք Շիպոյենց կուրսը այդպիսի մարդ կա», - պատմում է Ռոզա Գասպարյանը: Հովհաննես Գասպարյանն ունի տարբերվող ձեռագիր: Նրա գրեթե բոլոր գործերն ունեն քրիստոնեական ուղղվածություն, որոնցում ակնհայտ տեսնում ենք հրեշտակների, եկեղեցիների դրվագային պատկերների, հիմնականում զմբեթներ, սակայն ոչ կոնկրետացված, այլ սիմվոլիկ ձևով, հասցված պրիմիտիվիզմի: Ինչ-որ տեղից կարող են երևալ նաև հարազատ քաղաքի տեսարաններ կամ ճարտարապետական տարրեր: Գասպարյանն ամբողջ կյանքում նվիրված է եղել իր ծննդավայրին, շրջապատին ու հարազատ՝ Ս.Դ. Մերկուրովի անվան նկարչական դպրոցին: Նրա շատ աշխատանքներում օգտագործված են քրիստոնեական, ավելի կոնկրետ մանրանկարչական խորհրդանիշեր, կամարներ, կենաց ծառ կամ ճյուղեր, մուռ, խաչ: Չուկը և կարևոր տեղ է զբաղեցնում նրա գործերում: Շիպոն ձկնորսության հանդեպ մեծ նախասիրություն է ունեցել: Չկնորսության տարբեր սարքեր է ունեցել: Միգուցե այդտեղից է, որ նկարներում մշտապես տեսնում ենք ձկան պատկերը: Երբեմն նկատելի են դիցաբանական այլակերպ կերպարներ: Գասպարյանի մոտեցումները հիմնականում ունեն կլա-ժային տրամաբանություն: Նա, բաժանելով նկարի մակերեսը առանձին մասերի, համադրում է առաջին հայացքից միգուցե անհամատեղելի տեսարաններ: Մեկ նկարի մեջ կարող է համադրել ծաղիկներով մատուցվող խաչերի կամ հրեշտակների ու եկեղեցիների հետ: Նա կարծես միավորում է միջնադարը. հրեշտակների, սրբապատկերի կողքին նկարում է ժամանակակից մոտիվներով մերկ կանայք, խաղաթղթեր, խորհրդային մուրճն ու մանգաղը և այլն: Նրա հերոսներն անհատականացված չեն, չկա-

նա ժանրային կոնկրետացում: Նրա նկարներին որոշակիորեն բնորոշ են դեկորատիվությունը, նաև տարբեր մակերեսների դրվագայնությունը: Այդ մասերը երբեմն մարգինալացված են, երբեմն ակնհայտ, շեշտված են մանրանկարչական կերպարները: Բացի մակերեսի մասնատվածությունից՝ երևում է նաև մի քանի նկարաշերտերի կիրառումը, որ գալիս է գրաֆիկայի տեխնիկայից: Օգտագործել է խառը տեխնիկա՝ գրիչ, մատիտ, տուշ, ջրաներկ և այլն: Գույները ևս խառն են: Երբեմն կիրառվող վառ, լուկալ գունաբծերը թերևս գալիս են հայկական մանրանկարչությունից, սակայն գործերը մատուցված են նոր մոտեցմամբ: Որոշ աշխատանքներում գույները պասիվ են, սակավազույն, զծի գերակայությամբ, իսկ երբեմն էլ խիստ արտահայտված: Առանձին գործերում միայն զծի առկայություն է: Դրանք ավելի ծավալային են: Տարբեր կամ հատվածներն ընդհանրացվելով կարող են անգամ հասնել վերացականության: Չզայցված է, որ նկարիչը մանրակրկիտորեն է մոտեցել իր աշխատանքներին: Մրանով հանդերձ սպիտակ մակերեսների կամ մատիտանկարի առկայությունը կարող է խոսել անավարտության մասին, ինչը չի խանգարում դրանք դիտել որպես ավարտուն և վերջնական գործեր: Առաջին հայացքից Գասպարյանի նկարները անհասկանալի են ու բարդ ընկալման համար: Դրանք լիովին ընկալելու համար պետք է սուր դիտողականություն, քանի որ դետալիզացված են, միանգամից չերևացող: Ուշադիր զննելուց հետո միայն ինչ-որ հատվածից կարող են երևալ մանր, բայց կարևոր դետալներ: Նա չի կենտրոնանում մեկ հերոսի կամ առարկայի ու խորհրդանիշի վրա, դրանք շեշտված, բայց տարրալուծված են ընդհանուրի հետ, միաժամանակ և՛ ակնհայտ են, և՛ թաքուն: Նույն է վերաբերում է բովանդակությանը, դրանք և հասկանալի են, միա-

ժամանակ միստիկ ու փիլիսոփայական մոտեցմամբ: Մինչ գրաֆիկային անցնելը Գասպարյանը զբաղվել է կերամիկայով. ինստիտուտում սովորել է գեղարվեստական խեցեգործության բաժնում և 1981թ. ավարտելով՝ ստացել է դեկորատիվ կիրառական արվեստի նկարիչ որակավորումը: Վերադառնալով Գյումրի՝ աշխատել է արտադրական ձեռնարկությունում, կերամիկայի լաբորատորիայում: «Նա նաև Շահունյանի արձանի դիմաց գյումրեցիների քանդակ էր տեղադրել կերամիկայից, սակայն երկրաշարժից հետո անխնա կտորել տարել են: Բավականին մեծ չափերով, կոլորիտային քանդակ էր», - պատմում է քանդակագործ Ջորիկ Մկրտչյանը: Սակայն կերամիկան ավելի ծախսատար ոլորտ էր, և հետերկրաշարժյան դժվարին տարիներին նյութի, վառարանների, էլեկտրաէներգիայի խնդիրներ են առաջանում: Հենց այս հանգամանքով էլ թելադրված էր Գասպարյանի անցումը նյութապես ավելի մատչելի գրաֆիկայի տեխնիկային: 1988-ի երկրաշարժից հետո քաղաքում անմիթաբար վիճակ էր, սակայն արվեստով կրթվելը շարունակվում էր: Ս.Դ.Մերկուրովի անվան նկարչական դպրոցը շարունակում էր գործել անգամ տնակային պայմաններում: Գասպարյանն այդ տարիներին դասավանդում էր դպրոցում, եղել է ուսումնական մասի վարիչ: Սակայն, դպրոցի մտօրեն Սամվել Լաճիկյանի ԱՄՆ մեկնելուց հետո ինքն է ստանձնում մտօրենի պաշտոնը 1992-2010 թթ.: Ռոզան ևս այդ տարիներին սովորել է նկարչական դպրոցում: Հիշում է. «Այգու ցախերը բերում էինք, որ վառեինք, անգամ մեր տան հին իրերն էինք հավաքում որպես վառելիք»: Դպրոցն այդ տարիներին լուսավոր մի կետ ու ապավեն էր դարձել շատ երեխաների համար: Տնակային պայմաններից

հետո կրթօջախն առժամանակ աշխատանքները շարունակեց գյումրեցի մեծահարուստ Դրամիյաններին պատկանող Օժիտի շենքում: Գիշտ է, շենքը վթարային էր, անբարենպաստ պայմաններով, սակայն տնակներից նախընտրելի էր: Երբեմնի մերկուրովի Գոհար Սաֆարյանը հիշում է. «Նկարչական դպրոց հաճախել սկսել են հետաքրքրասիրությունից: Այդ ժամանակ տնօրենը ընկեր Գասպարյանն էր. մոտեցավ և բացատրեց ինչպես պիտի նկարեմ: Շենքը հին էր, վթարային, բայց չէր խանգարում, որ սիրով հաճախեիք, պատերին կպած, փոքր-ինչ վախենալով՝ գնում էինք դասի: Դպրոցն ուներ ջեռուցման խնդիր, բայց դա էլ չէր խանգարում, քանի որ ուսուցիչները ջերմ էին, միջավայրը՝ տրամադրող, աշակերտները՝ ձգտող: Չմռանը, եթե չհասցնեիր արագ վերջացնել նկարը, վրձինը սառած կմնար ջրամանի մեջ: Նկարչական դպրոցի նախկին շենքի փոքր պատշգամբ էինք դուրս գալիս, երեք մեծ մուլբերտ էինք դնում երեք աշակերտով, որ Գյումրու համայնապատկերը պլեներ անեինք: Չնայած այս ամենին ամենաքաղցր հիշողություններով տարիներն էին: Առաջին անգամ A1 չափի թուղթ տեսել են նկարչական դպրոցում, ընկեր Գասպարյանի մոտ, զարմացել էի թղթի մեծ չափերից, հետո տնեցիներին խնդրեցի, որ ինձ համար միշտ մնան մեծ թուղթ գնեն: Ընկեր Գասպարյանը մեզ այդ տարիներին դաս չէր տալիս: Արագ-արագ մտնում էր դասարան, նայում նկարներին, զվարճալի պատմություններ պատմում, մեզ ծիծաղեցնում ու գնում էր»:

Գայանե ՊԱՊԻԿՅԱՆ
Արվեստագետ

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

<p>Լրատվական գործունեությունն իրականացնող Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղը: Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62 Վկայական N 01Բ 001543</p>	<p>տրված է 21.03.2005թ. հեռ. (094) 53 44 64 խմբագրական խորհուրդ Գլխավոր խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան</p>	<p>Համակարգչային ձևավորումը՝ «Էլտորադո Պրինտ» ՍՊԸ Տպագրված է «Ռուբիկ Դարիբյան» Ա/Չ տպագրատանը Տպաքանակը՝ 500 Ծավալը՝ 1 տպագրական մամուլ</p>
--	--	---